ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Տեքսուորլդ ՍՊԸ-ն ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-ՀԱՄԱՁԳԵՍՏ-26/9 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
16	իտել տոնական երկկոճկուն (երկփեղկ)՝ բաց մոխրագույն 67% բուրդ, 33% Պ/Է 317գր/մ2 խտությամբ կտորից, մարմինը կիսագրկող մակերեսով, հետ ծալած օձիքով, օձիքի եզրերը մշակված են 342 գր/մ2 խտությամբ մահուդե կարմիր եզրագծով, Օձիքի վրա ոսկեգույն թելով ասեղնագործվում է Հակակոռուպցիոն Կոմիտեում բարձրագույն դասային աստիճան ունեցող Կոմիտեի ծառայողների համար նախատեսված եզրազարդի խորհրդանշանը (Ձև 3, Նկար 2):Բարձրագույն դասային աստիճան ունեցող Կոմիտեի ծառայողների համար երկկոճկուն (երկփեղկ) 6 ոսկեգույն 22մմ տրամագծով Հակակոռուպցիոն կոմիտեի խորհրդանիշը ոսկեգույնով երիզված կոճակներով է, որոնք տեղադրված են երկշարք (Ձև 9, Նկար 3): Թևքերը երկկարանի են, թևքերի վրա մշակված են ծալքեր, որոնց վերին հատվածում ոսկեգույն եզրագծով ոսկեգույն թելով կարվում է ձեռագործ ասեղնագործություն (Ձև 3, Նկար 1): Թիկունքն ամբողջական է՝ երկու կողային բացվածքով: Կիտելի 2 փեշերի վրա ուղղանկյուն կափույրով ներկարված գրպաններ են: Ձախ թևի ուսակարից 90 մմ ներքև ՀՀ զինանշանի ջակարդե թևքանշանն է (Ձև 6, Նկար 2), իսկ աջ թևի ուսակարից 90 մմ ներքև՝ Հակակոռուպցիոն Կոմիտեի ջակարդե թևքանշանը(Ձև 6, Նկար 3): Աստառը՝ մոխրագույն մետաքսե, ծոցագրպանով: Համաձայն՝ ՀՀ կառավարության 22.09.2022թ N 1476-Ն որոշման: Տաբատ տոնական՝ մուգ կապույտ 67% բուրդ, 33% Պ/Է 317գր/մ2 խտությամբ կտորից, ուրվագիծը՝ ուղիղ, կողային կարերով անցնում է կարմիր 342 գր/մ2 խտությամբ մահուդե 3 եզրագիծ, 2-ը՝ 2 սմ լայնությամբ, իսկ մեջտեղինը՝ 1,5-ից 2 մմ (Ձև 9, Նկար 3): Գոտին՝ կամրջակներով: Կոճկվում է կոճակով, մետաղյա կեռիկով և շղթայով: Կողային գրպանները թեք են, հետնամասի աջ կողմում՝ կոճակով կոճկվող կափույրով ներկարված գրպան: Առաջամասը՝ մինչև ծնկները

	մետաքսյա աստառով (Ձև 9, Նկար 3): Համաձայն՝ ՀՀ կառավարության 22.09.2022թ N 1476-Ն որոշման:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Тексуорлд в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-ՀԱՄԱՁԳԵՍS-26/9 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
16	